Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

_____ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

ԹԻՎ _____ ՆԻՍՏ

_____ _____ 2026Թ.

Կ.Տ..

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵՏԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ – 2026

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Մետափիլիսոփայության, փաստարկման և հայագիտության միջազգային ինստիտուտը» (այսուհետ՝ Ինստիտուտ) համալսարանի գիտահետազոտական ստորաբաժանում է, որը գործում է համալսարանի կանոնադրության, ՀՀ օրենքների և ներքին կարգավորումների հիման վրա և իրականացնում է գիտահետազոտական, մեթոդաբանական և գիտակազմակերպչական գործունեություն՝ «Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները. փիլիսոփայական և հայագիտական տեսանկյուններ» ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման (Ծածկագիր՝ 25ASPU-TRANSFORM-APP-I-6C) ծրագիրի շրջանակում:

1.2. Ինստիտուտի հիմնական նպատակն է հաղորդակցման, փաստարկման, սովորողների քննական մտածողության և «փափուկ հմտությունների» սոցիալ-փիլիսոփայական և մեթոդաբանական հիմնահարցերի և հայագիտական հետազոտությունների զարգացումը, ինչպես նաև՝ կրթության, մասնավորապես մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների, ժամանակի պահանջներին համապատասխան դասընթացների բովանդակային թարմացումը և ստեղծարար մտածողության որակները խթանող մեթոդական զինանոցի հզորացումը:

1.3. Նկատի ունենալով ՀՊՄՀ մասնագիտական առանձնահատկությունները և բուհի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունը՝ Ինստիտուտը խնդիր է դնում նպաստել գիտության և կրթության փոխազդեցությանը, խթանել միջազգային և միջգիտակարգային համագործակցությունը:

- Դրանցից առաջնայինը գիտահետազոտական գործունեությունն է:
- Երկրորդը գիտահետազոտական գործունեության արդյունքների ներառումն է դասընթացների գործող ծրագրերում, նոր դասընթացների մշակումը և դրանց ներդրումը բուհական կրթական համակարգերում:
- Երրորդը հետազոտության արդյունքների քննարկման, մասնագիտական փորձաքննության և տարածման նպատակով տեսական սեմինարների և գիտաժողովների կազմակերպումն է:
- Չորրորդը հետազոտության արդյունքները բովանդակող գիտական հրապարակումներն են:

II. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ինստիտուտի տնօրենը

2.2. 2 գիտական լաբորատորիաները՝

- Փիլիսոփայական հետազոտությունների գիտական լաբորատորիա
- Մանկավարժական և հայագիտական հետազոտությունների գիտական լաբորատորիա

2.3. Հունգարիայի պատմության, մշակույթի և լեզվի կենտրոն

2.4. Լաբորատորիաների ղեկավարները

2.5. Գիտաշխատողները՝
- առաջատար,
- ավագ,
- կրտսեր:

III. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ինստիտուտի աշխատակիցների հաստիքները և գործառույթները սահմանելիս հիմք է ընդունվել ՀՀ կառավարության գիտական կադրերի ատեստավորման կարգը, Գիտական պետական կազմակերպություններում և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման և նվազագույն չափանիշները հաստատելու մասին 2023 թ. դեկտեմբերի 21-ի որոշումը:

Ինստիտուտը իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.1. Գիտահետազոտական գործունեություն:

3.2. Հիմնարար և կիրառական գիտահետազոտական ծրագրերի, գիտահանրամատչելի և մեթոդական նյութերի պատրաստում և իրականացում:

3.3. Գիտական մեթոդաբանության և նորարարական հետազոտական մոտեցումների մշակում:

3.4. Բուհական և դպրոցական դասընթացների բովանդակային բարելավումներ:

3.5. Բուհերում և հանրակրթական դպրոցներում դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանն ուղղված ծրագրերի իրականացում:

3.6. Կրթական ոչ ֆորմալ ծրագրերում հետազոտության արդյունքների կիրարկում և փորձաքննություն:

3.7. Գիտաժողովների, տեսական սեմինարների, կոնֆերանսների, կլոր սեղան-գիտական քննարկումների կազմակերպում և իրականացում:

3.8. Հետազոտության արդյունքների հրապարակում: Աջակցություն գիտաշխատողների տպագրական գործունեությանը (լրացուցիչ ֆինանսավորում ստանալու պարագայում):

3.9. Միջազգային համագործակցության խթանում, համատեղ նախագծերի իրականացում:

3.10. Միջգիտակարգային հետազոտությունների իրականացում համալսարանի այլ ստորաբաժանումների հետ:

3.11. ՀՊՄՀ-ում գործող Հունգարական կենտրոնը զբաղվում է հունգարերենի ուսուց-մամբ, հունգարական մշակույթի և պատմության հանրահռչակմամբ: Կենտրոնն իրականացնում է հունգարերենի անվճար դասընթացներ ինչպես սկսնակ, այնպես էլ լեզվական որոշակի մակարդակ ունեցող ուսանողների համար: Կենտրոնը հետևողականորեն աշխատում է նաև այն ուսանողների հետ, ովքեր ցանկանում են իրենց կրթությունը շարունակել Հունգարիայում՝ պարբերաբար ներկայացնելով կարճաժամկետ և երկարաժամկետ կրթաթոշակային հնարավորություններ: Կենտրոնում կազմակերպվում են հունգարական մշակույթին նվիրված ցերեկոներ, Հունգարիայի պատմության շուրջ ցուցահանդեսներ, սեմինարներ, թարգմանչական աշխատարաններ, ցուցադրվում են հայերեն ենթագրերով հունգարական ֆիլմեր:

IV. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1. Ապահովում է Ինստիտուտի ռազմավարական ղեկավարումը,

4.2. սահմանում է գիտահետազոտական առաջնահերթություններն ու ոլորտը,

4.3. համակարգում է «Փոխակերպվող հասարակության հիմնախնդիրները, փիլիսոփայական և մանկավարժահոգեբանական տեսանկյուններ» ծրագրի իրականացումը;

4.4. յուրաքանչյուր տարվա Հայտագրվող ծրագրում ներառում և ամփոփում է լաբորատորաների ծրագրերից բխող գիտական *ակնկալվող* արդյունքների տվյալները, իսկ տարեկան հաշվետվություններում դիտարկում, համադրում, և ամփոփում է *իրականացված* գիտական արդյունքների տվյալները;

4.5. յուրաքանչյուր տարվա համար պատրաստում է միջնաժամկետ ծախսային ծրագիր եվ բյուջետային ֆինանսավորման հայտ;

4.6. կազմում և հաստատում է շրագրի աշխատանքների Օրացուցային պլանը;

4.7. կազմում և ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ին է ներկայացնում ծրագրի ծախսերի նախահաշվը;

4.8. վերահսկում է լաբորատորիաների աշխատանքը;

4.9. կազմում և ներկայացնում է տարեկան համառոտ հաշվետվություն ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնին և տարեկան ամփոփիչ հաշվետվություն ՀՀ ԿԳՍՄՆ ԳԿ-ին՝ առցանց և առձեռն տարբերակով;

4.10. ստորագրում է Ինստիտուտի ընթացիկ փաստաթղթերը և ներկայացնում այն համալսարանում;

4.11. ներգրավում է արտաքին գործընկերներ, ապահովում միջազգային համագոր-ծակցություններ:

V. ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5.1. Լաբորատորիայի ղեկավարը

- ղեկավարում է լաբորատորիայի գիտական գործունեությունը,
- մշակում է լաբորատորիայի հետազոտական ծրագրերը և ապահովում դրանց իրականացումը,
- վերահսկում է գիտաշխատողների աշխատանքը,
- կազմում է տարեկան և thematic հաշվետվություններ,
- համագործակցում է համալսարանի այլ ստորաբաժանումների և արտաքին գիտական կենտրոնների հետ,
- ապահովում է գիտական քննարկումների, սեմինարների և աշխատանքային նիստերի իրականացումը:

5.2. Առաջատար գիտաշխատողը

- Իրականացնում է խորքային, բարձր մակարդակի հետազոտություններ:
- Ղեկավարում է հետազոտական թիմեր, հանդես է գալիս որպես նախագծերի համահեղինակ:
- Ապահովում է միջազգային հրապարակումների պատրաստում:
- Մասնակցում է գիտական քաղաքականության ձևավորմանը լաբորատորիայում:

5.3. Ավագ գիտաշխատողը

- Իրականացնում է ինքնուրույն գիտահետազոտական ծրագրեր:
- Պատրաստում է գիտական վերլուծություններ, զեկուցումներ, հոդվածներ:
- Մասնակցում է գիտական նախագծերի և լաբորատորիայի ընդհանուր պլանների իրականացմանը:

5.4. Կրտսեր գիտաշխատողը

- Իրականացնում է աջակցող հետազոտական աշխատանքներ:
- Մշակում է տվյալներ, կատարում գրականության ուսումնասիրություն:
- Մասնակցում է գիտական միջոցառումներին և լաբորատորիայի ընթացիկ նախագծերին:

VI. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետազոտական թիմի բոլոր անդամները պարտավոր են՝

6.1. Ծրագրի շրջանակում իրականացնել թեմայի մեթոդաբանական մշակում, տվյալների հավաքագրում և վերլուծություն (Data Analysis); գիտահետազոտական, կրթամեթոդական և կազմակերպական աշխատանքներ,

6.2. Հրապարակել իրենց հետազոտության արդյունքները;

6.3. Հետազոտության ստացված արդյունքների փորձաքննության և մասսայականացման նպատակով կազմակերպել գիտաժողովներ և քննարկել դրանք ներքին ու արտաքին միջոցառումներում;
6.4. Պահպանել գիտական էթիկայի կանոնները;
6.5. Աջակցել միջգիտակարգային համագործակցությանը;
6.5. Կատարել համալսարանի ներքին կարգադրություններով նախատեսված պարտականությունները:

VII. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կանոնադրության փոփոխությունները կատարվում են Ինստիտուտի տնօրենի առաջարկով և հաստատվում համալսարանի լիազոր մարմնի կողմից: